ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ

N 3628 «05» 09 2016թ.

0078, Երևան, Հալաբյան 41ա հեռ. 060 570 427

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ՊԵՏ ՊԱՐՈՆ Մ.ԱՆԱՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Անանյան

Սույնով հայտնում ենք, որ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից **ԴԾԻԳ-ՇՀԾՁԲ-16-11/1-2** ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ 24.06.2016թ.-ին gnumner.am կայքում հրապարակված բացասական եզրակացության մեջ նշված թերությունները ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայություն գնումների համակարգող «Դատաիրարավական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի կողմից շտկվել են և 27.06.2016թ.-ին հրավերի փոփոխված տարբերակը հրապարակվել է կայքում: Սակայն համակարգողի կողմից հրավերում չի նշվել լիցենզիա ներկայացնելու պահանջը, ինչը սակայն չի հանգեցրել գնման ընթացակարգի կամ դրա արդյունքների փոփոխմանը, ինչպես նաև գնման գործընթացի մասնակիցների շահերի ոտնահարմանը:

Միաժամանակ հայտնում ենք, որ ընթացակարգի միակ մասնակից և հաղթող ճանաչված «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ն ունի համապատասխան ծառայություններ մատուցելու լիցենզիա:

Հարգանքով,

*ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՅՈՐ* *Ա.ՍԱՖԱՐՅԱՆ*